Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Երևանի Ա.Ս. Պուշկինի անվան թիվ 8 հիմնական դպրոց»

ՊՈԱԿ

Առարկա՝ Համաշխարհային պատմություն

Թեմա՝ Միջառարկայական կապերի հաստատումը համաշխարհային պատմության դասավանդման գործընթացում

Վերապատրաստող, մենթոր՝ Գայանե Մանուկյան

Ուսուցիչ՝ Անահիտ Սեդրոյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ԳԼՈՒԽ 1. ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1 Միջառարկայական կապերի էությունը և գործառույթները համաշխարհային պատմության դասավանդման գործընթացում……..……5

1.2 Միջառարկայական կապերի հաստատումը համաշխարհային պատմություն-հայոց պատմություն առարկաների միջև……..…..……10

1.3 Միջառարկայական կապերի հաստատումը համաշխարհային պատմության և այլ հումանիտար առարկաների միջև.....14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..……23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի արդիականությունը: Ներկայումս արդիական է գիտությունների ինտեգրացիան, աշխարհի ընդհանուր պատկերի մասին առավել ճշգրիտ պատկերացում ստանալու ձգտումը: Այդ գաղափարներն արտացոլում են գտնում ժամանակակից դպրոցական կրթության հայեցակարգում: Բայց անկարելի է մեկ ուսումնական առարկայի շրջանակներում լուծել այդպիսի խնդիր, ուստի ուսուցման տեսությունում և պրակտիկայում օգտագործում են միջառարկայական ընդհանրացումներ: Միջառարկայականության օգտագործումը նպաստում է սովորողների մտածողության, ինքնուրույնության, ճանաչողական և ստեղծագործական ակտիվության զարգացմանը:

Միջառարկայական կապերը, արտացոլելով շրջակա աշխարհի երևույթների և գործընթացների փոխկապակցությունները, էական դեր են խաղում սովորողների մոտ համակարգային մտածողության զարգացման և ընդհանուր-ուսումնական կոմպետենտությունների ձևավորման գործընթացում. դրանք հնարավորություն են տալիս որևէ ուսումնական առարկայի ուսուցման արդյունքում կազմավորված կարողությունները, հմտությունները փոխանցել այլ առարկաների բնագավառ:

Դիդակտիկայի տեսակետից՝ միջառարկայական կապերի իրագործումը որոշակիորեն բարձրացնում է ուսուցման գիտական մակարդակը, նպաստում՝ սովորողների կողմից նյութի յուրացմանը: Բացի այդ, միջառարկայական կապերի բազմակողմանի իրագործումը հնարավորություն է տալիս օպտիմալացնել հումանիտար առարկաների համախմբի ուսուցման գործընթացը և, դրանով իսկ, կրճատել սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը:

Համաշխարհային պատմության դասավանդման ընթացքում միջառարկայական կապերի կիրառումը հանդիսանում է առարկայի ուսուցման արդյունավետության բարձրացման կարևոր միջոց: Համաշխարհային պատմության օբյեկտը ամբողջ աշխարհի պատմական իրադարձություններն են: Ուստի միջառարկայական կապերը պետք է դիտարկել ոչ միայն որպես «կամրջակներ» տարբեր ուսումնական առարկաների միջև, այլև որպես ուսուցման ամբողջական համակարգի կառուցում գիտական իմացության մեթոդների և գիտելիքների բովանդակության ընդհանրության հիման վրա:

Միջառարկայական կապերի իրականացումը դպրոցում կարևոր դիդակտիկական խնդիր է, բխում է սիստեմատիկության դիդակտիկական սկզբունքից: Նման կապերի հնարավորությունը պայմանավորված է նրանով, որ համաշխարհային պատմությունում և կից առարկաներում ուսումնասիրվում են նույնանուն հասկացություններ, պատմական իրադարձություններ: Տարբեր ուսումնական առարկաներում գիտելիքների և մեթոդների այդպիսի փոխադարձ ներթափանցումը ոչ միայն կիրառական ու պրակտիկ նշանակություն ունի, այլև արտացոլում է գիտության զարգացման ժամանակակից միտումները, նպաստավոր պայմաններ է ստեղծում գիտական աշխարհայացքի ձևավորման համար:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ միջառարկայական կապերի ներգրավումը բարձրացնում է ուսուցման գիտականությունը, մատչելիությունը, տեսությունը հագենում է պրակտիկ բովանդակությամբ: Համաշխարհային պատմության դասավանդման գործընթացում միջառարկայական կապերի հաստատումը կապված է տարբեր ուսումնական առարկաներում նույնանուն հասկացությունների մեկնաբանության ու նրանց ուսումնասիրության ժամանակի համաձայնեցման հետ:

Հետազոտական աշխատանքի նպատակը: Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել միջառարկայական կապերի հաստատումը համաշխարհային պատմության դասավանդման գործընթացում:

Հետազոտական աշխատանքի խնդիրները: Հետազոտական աշխատանքի նպատակով պայմանավորված՝ առաջադրվել և լուծվել են մի շարք խնդիրներ.

1. ուսումնասիրել միջառարկայական կապերի էությունը և գործառույթները համաշխարհային պատմության դասավանդման գործընթացում,
2. ուսումնասիրել միջառարկայական կապերի հաստատումը համաշխարհային պատմություն-հայոց պատմություն առարկաների միջև,
3. ուսումնասիրել միջառարկայական կապերի հաստատումը համաշխարհային պատմության և այլ հումանիտար առարկաների միջև:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը կազմված է մեկ գլխից, որն ունի 3 ենթագլուխ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1 Միջառարկայական կապերի էությունը և գործառույթները համաշխարհային պատմության դասավանդման գործընթացում

Հանրակրթական դպրոցի գործող ծրագրերում և չափորոշիչներում հատուկ ուշադրությունն է դարձվում ուսումնական գործընթացի այնպիսի կառուցմանը, որը ապահովում է ոչ միայն գիտելիքների ձեռքբերումը, այլ նաև սովորողների մոտ առարկաների, երևույթների ընկալման, վերլուծման, ընդհանրացման գործընթացների ձևավորումը և, ամենակարևորը, գործնականում այդ գիտելիքների կիրառումը: Ողջ ուսումնական գործընթացը կառուցվում է միջառարկայական կապերի հիման վրա: Ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի կիրառման անհրաժեշտության հիմնավորման համար բերում են հետևյալ փաստարկները. «Որպես մեկ ամբողջականություն՝ տարբեր առարկաների շնորհիվ նյութի ուսումնասիրման հնարավորություն»[1]:

Ժամանակակից հանակրթության նպատակներից մեկը մարդու, բնության և հասարակության մասին գիտելիքները կյանքում կիրառելու կարողությունների և հմտությունների ապահովումն է, որը հեշտությամբ կարելի է իրագործել ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի կիրառմամբ: Հանրակրթական դպրոցներին ներկայացվող ժամանակակից պահանջների իրականացումը նոր խնդիրներ է առաջադրում ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում: Վերանայվել և լուրջ փոփոխություններ են կատարվել դպրոցական ուսումնական և առարկայական ծրագրերում, դասագրքերում:

Դասավանդման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների

[1] Максимова В.Н., Межпредметные связи и совершенствование процесса обучения. М.: «Просвещение», 1984. с 84.

միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»[2]:

Միջառարկայական կապերի անհրաժեշտությունը մանկավարժության համար նոր հիմնախնդիր չէ, և խնդրի լուծումը մշտապես հիմնավորվել է փիլիսոփայական հայացքներով, տարբերակված գործընթացի և գիտական կարողությունների ու հմտությունների ինտեգրման այս կամ այն աստիճանի ընդհանուր զարգացման ընթացքում: Մանկավարժության մեջ միջառարկայական կապերի հիմնահարցին անդրադարձել են (Հ. Պեստալոցի, Ֆ. Հերբարտ, Ա. Դիստերվեգ և ուրիշներ) գերազանցապես ճանաչողական առումով՝ միջառարկայական կապերի իրականացումը համարելով ուսուցման բարելավման կարևոր միջոց[3]:

Գիտելիքների փոխանցման խնդրին, սովորողների կարողությունների ձևավորմանը, դրանց համադրմանը և նոր իրադրության մեջ կիրառելուն նվիրված են մի քանի մանկավարժների հետազոտություններ[4]: Այսպես, Վ. Ն. Մակսիմովայի կարծիքով միջառարկայական կապերի բարեհաջող իրականացումը դրականորեն է ազդում ուսումնական գործընթացի վրա և նպաստում ակտիվ ձևերի կազմակերպմանը[5]: Առավել արդյունավետ է միջառարկայական կապերի իրականացումն այն դեպքերում, երբ այլ առարկաների ու դասընթացների գիտելիքները ոչ միայն ընդօրինակվում ու կիրառվում են որպես լուսաբանում, այլև գործածվում են որպես սովորողների մտածողության ակտիվացման միջոց, համեմատության ու ուսումնական նյութի ընդհանրացման, վերլուծության նպատակով և տարբեր ուսումնական առարկաների ուսումնասիրությամբ:

---

[2] Коменский Я. Великая дидактика. Санкт-Петербург. 2016.

[3]Абдуллаева Г.Д., Атажанов И.И. Межпредметные связи в современной школе// Актуальные проблемы гуманитарных и естественных наук.- 2016.-N 3-3. – с. 66-68.

[4] Гурьев А. И., Статус межпредметных связей в системе современного образования / А. И. Гурьев // «Наука и школа», 2002, N 2, с. 41-45.

[5] Максимова В.Н., Межпредметные связи и совершенствование процесса обучения. М.: «Просвещение», 1984. с 85-102.

Ներկայումս միջառարկայական կապերի հասկացության միանշանակ բնորոշում չի տրվում: Տարբեր հեղինակների կողմից միջառարկայական կապերը բնորոշվում է որպես գիտության հիմունքների դասավանդման գիտական մակարդակի բարձրացման դիդակտիկական պայման կամ ուսուցման գործընթացում միջգիտական կապերի արտացոլում: Միջառարկայական կապերը բնորոշվում է նաև որպես տարբեր ուսումնական առարկաների ծրագրերի ու դասագրքերի փոխկապակցվածությունն ապահովող միջոց, գիտականության, համակարգվածության, գիտակցականության սկզբունքներն ապահովող գործոն: Միջառարկայական կապերին նվիրված մի շարք աշխատություններում այն դիտվում է որպես դիդակտիկական սկզբունք, որի գլխավոր խնդիրը բնության և հասարակության մասին գիտելիքների ամբողջական համակարգի ձևավորումն է: Այս տեսանկյունից մատչելիությունը, համակարգվածությունը, անհատական ուսուցումը, գործնական-կիրառական ուղղվածությունը դառնում են միջառարկայական կապերի իրագործման միջոց:

Միջառարկայական կապերը ընդհանուր դիդակտիկական հասկացություն է, որը, կախված շրջակա աշխարհի ուսումնասիրման մակարդակից, ունի տարբեր ձևակերպումներ, մասնավորաբար[6]՝

- միջառարկայական կապերը միջգիտական կապերի արտացոլումն է ուսուցման գործընթացում,
- միջառարկայական կապերը հանրակրթական տարբեր առարկաների ուսումնական ծրագրերի, դասագրքերի փոխկապակցվածությունն ապահովելու միջոց է, որի նպատակն է գիտության տեսական հիմքերի դասավանդման որակի բարելավումը, սովորողների աշխարհայացքի ձևավորումը և զարգացումը,
- միջառարկայական կապերը ուսումնական առարկաների փոխպայմանավորվածությունն ապահովող դիդակտիկական գործոն է,
- միջառարկայական կապերը դիդակտիկական սկզբունքները ներառող օղակ է և միտված է բնության երևույթները, օրինաչափություններն ու օրենքները ճանաչող,

[6] Гурьев А. И. Межпредметные связи в системе современного образования: Монограеия,- Барнаул: Изд-во Алт. Ун-та, 2002.

բարձր կարգի մտածողության մեթոդներին տիրապետող և գործնականում կիրառող, բնության ներդաշնակությունը գիտակցող անձի ձևավորմանը:

Միջառարկայական կապերը՝ մեթոդաբանական առումով հոգեբանորեն հիմնավորված դիդակտիկական գիտելիքների ինքնուրույն ոլորտ է, դիդակտիկական սկզբունքների, մեթոդների, միջոցների այնպիսի կառուցվածք, որի միջոցով ձևավորվում է գիտելիքների որակապես նոր մակարդակ միջառարկայական գիտելիքներ: Այն հնարավորություն է տալիս սովորողներին տիրապետելու մտածողության համընդհանուր մեթոդներին, դիտարկելու, մոդելավորելու, վարկածներ առաջադրելու, դրանք փորձնական ճանապարհով ստուգելու, ստացված արդյունքները ընդհանրացնելու և եզրահանգելու, հիմնավորված փաստարկներ բերելու և բնության այս կամ այն երևույթի մասին տրամաբանված դատողություններ անելու:

Նշենք միջառարկայական կապերի հիմնական դիդակտիկական գործառույթները, կառուցվածքային տարրերը և գործունեության հիմնական ուղղությունները:

Գործառույթներ.

- գիտելիքների ընդհանրացում և համակարգում,
- առարկաների ուսումնական պլանների համաձայնեցում,
- սովորողների մոտ աշխարհի ամբողջական գիտական պատկերի ձևավորում,
- մտածողության համընդհանուր մեթոդների ձևավորում:

Կառուցվածքային բաղադրիչներ.

- հարակից ուսումնական առարկաների ընդհանուր հասկացությունները, օրինաչափությունները և միջառարկայական հասկացությունները,
- հարակից ուսումնական առարկաների ճանաչողական ունակությունները, համաուսումնական կարողությունները (գրել, կարդալ, փաստարկված միտք արտահայտել, գործունեությունը պլանավորել և այլն),
- գիտական ճանաչողական մեթոդները (դիտում, փորձ, մոդելավորում, վերլուծություն, համադրում և այլն),
- գործունեական կարողությունը (մեծությունների չափում, գրաֆիկների կառուցում):

Գործունեության հիմնական ուղղություններ.

- տեսությունների ուսումնասիրման համար անհրաժեշտ ընդհանուր հասկացությունների ձևավորման շարունակականության ապահովում,
- օրինաչափությունների և երևույթների փոխադարձ կապի բացահայտում,
- տարբեր առարկաներից ուսումնասիրած նյութի «կրկնօրինակման» բացառում,
- տարբեր ուսումնական առարկաների շրջանակներում գիտական ճանաչողության մեթոդների կիրառման ընդհանրություն:

Միջառարկայական կապերի իրագործման հիմնական ձևերն են.

- հիմնական օրինաչափությունները բացահայտող տեսությունների ընդհանրական կողմերի վերհանում,
- այլ առարկաներից ստացած գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառում,
- արտադասարանական պարապմունքների անցկացում:

Միջառարկայական կապերի օգտագործումն իր որոշակի տեղը պետք է ունենա ուսումնական աշխատանքի ընդհանուր համակարգում և նույնիսկ յուրաքանչյուր առանձին նյութի ուսումնասիրության ընթացքում: Դասի ժամանակ կամ նյութի ուսումնասիրության ընթացքում միջառարկայական կապերը կարող են օգտագործվել երկու տարբեր պահերին՝ նայած անհրաժեշտությանը և նյութի բնույթին.

1. Ուսումնասիրվող նյութի շուրջ անցկացվող նախապատրաստական զրույցի ընթացքում ուսուցիչը կարող է օգտագործել ուսումնական այլ առարկաների և այլ գիտությունների տվյալները նյութի վերաբերյալ ավելի պարզ պատկերացում տալու համար, որպեսզի դրանով իսկ հող ստեղծվի բուն նյութի յուրացման համար:

2. Նյութի մշակման ժամանակ, երբ աշակերտների ընթերցած այս կամ այն հատվածի շուրջ որոշակի բացատրություններ են տրվում ուսուցչի և աշակերտների կողմից, կարելի է համանման փաստեր բերել նաև արդեն անցած նյութերից, համեմատություններ, հակադրություններ ու զուգահեռներ անցկացնել՝ միտքն ավելի պարզ, գաղափարներն ու հասկացություններն ավելի մատչելի դարձնելու համար:

1.2 Միջառարկայական կապերի հաստատումը համաշխարհային պատմություն-հայոց պատմություն առարկաների միջև

Համաշխարհային պատմություն-հայոց պատմություն միջառարկայական կապը խիստ հետաքրքիր է ու հեռանկարային՝ որպես սովորողների աշխարհայացքը ձևավորող գործոն: Այս երկու կից դիսցիպլինները շատ տեղերում հանդես են գալիս սերտաճած, և առանց միջառարկայական կապերի ստեղծման հնարավոր չէ սովորողների մոտ լիարժեք պատկերացում ձևավորել ազգային պատմության՝ միջազգային հարաբերությունների պատմության համապատկերում ունեցած դերի և տեղի մասին:

Միջառարկայական կապերի հաստատման լավագույն օրինակ կարող է լինել Համաշխարհային պատմության 8-դասարանի դասագրքի «Առաջին աշխարհամարտի սկիզբը և ընթացքը (1914-1916 թվականներ)», «Առաջին աշխարհամարտի ավարտը և հետևանքները»[7] թեմաների և Հայոց պատմության 8-րդ դասարանի դասագրքի «Հայաստանը և հայ ժողովուրդը առաջին աշխարհամարտի տարիներին»[8] թեմաների փոխկապակցումը:

Համաշխարհային պատմության 8-րդ դասարանի դասագրքի «Առաջին աշխարհամարտի սկիզբը և ընթացքը (1914-1916 թվականներ)» թեմայի ուսուցման ընթացքում սովորողները ծանոթանում են միջազգային հարաբերությունների զարգացման և փոփոխությունների հետ:

20-րդ դարի սկզբներին միջազգային ասպարեզում սկսեց գերակայել պետությունների սահմանները ընդլայնելու և նոր գաղութներ ձեռք բերելու միտումը: Տարածքային ընդարձակումը և հումքի նոր աղբյուրներին ու իրացման շուկաներին տիրանալը սուր մրցակցություն առաջացրին: Ուրիշ ազգերին տիրելու և դա իրենց ազգային գերազանցությամբ հիմնավորելու գաղափարախոսությունը ստացել է իմպերալիզմ (կայսերապաշտություն) անունը: Նման գաղափարախոսություն էին մշակել ժամանակի տերությունները՝ Մեծ Բրիտանիան, Գերմանիան, ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Ֆրանսիան, Իտալիան, Ավստրո-Հունգարիան և Ճապոնիան: Խոշոր տերությունների միջև անհաշտ

---

[7] Համաշխարհային պատմություն: 8-րդ դասարան/Ն. Հովհաննիսյան, Ա. Ղուկասյան, Ա. Ղուկասյան, Ա. Նարիմանյան – Եր.: ԷԴԻԹ ՊՐԻՆՏ, 2013:

[8] Հայոց պատմություն: Նոր շրջան 8/ Վ. Բարխուդարյան, Պ. Չոբանյան, Ա. Խառատյան, Է. Կոստանդյան, Ռ. Գասպարյան, Ռ. Սահակյան, Ա. Հակոբյան.- Եր.: «ՄԱՆՄԱՐ», 2018:

մրցակցություն ծավալվեց հատկապես հումքի հարուստ պաշարների, ինչպես նաև ռազմավարական նշանակություն ունեցող տարածքների համար:

Այստեղ ուսուցիչը շեշտադրում է, որ Կովկասյան տարածաշրջանի համար կարևոր ռազմավարական նշանակություն ուներ Հայաստանը:

Այս առումով միջառարկայական կապերի ստեղծման համար կարևոր է նաև Հայոց պատմության «Համաշխարհային պատերազմի կովկասյան ճակատը» թեմայի հետևյալ հատվածը. «Հայաստանը և Օսմանյան կայարության ու Ռուսաստանի ռազմաքաղաքական ծրագրերը: Առաջին աշխարհամարտն սկսվեց **1914 թ. օգոստոսի 1-ին (հին տոմարով՝ հուլիսի 19-ին)**: Անարդարացի ու զավթողական պատերազմն ընթանում էր մեծ տերությունների երկու խմբավորումների՝ Անտանտի և Եռյակ (մեկ տարի անց՝ Քառյակ) միության միջև:

Անտանտի հակառակորդ Գերմանիային հաջողվեց Օսմանյան Թուրքիային ներգրավել իր դաշինքի մեջ՝ վերջինիս խոստանալով ամեն կարգի աջակցություն Անտանտի դեմ պատերազմի ժամանակ: Գլխավոր պատճառը, որ դրդեց երիտթուրքերին նույնպես ներքաշվելու պատերազմի մեջ, թուրք-ռուսական հակամարտությունն էր: Երիտթուրքերը մտադիր էին Ռուսաստանյան կայսրությունում բնակվող թուրքալեզու, ինչպես նաև մահմեդական մյուս ժողովուրդներին օգտագործել ռուսների դեմ և ապագայում միավորել նրանց «Մեծ Թուրանի» մեջ: **Պանթյուրքական այդ ծրագրի իրագործման ճանապարհին լուրջ խոչընդոտ էին հայերն ու Հայաստանը**: Հետևաբար Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելու հիմնական նպատակներից էր նաև հայ ժողովրդի բնաջնջումը, նրա հայրենազրկումը: Ռուսաստանը ևս մեծ ակնկալիքներ ուներ Թուրքիայի հետ ռազմական հերթական բախումից: Նա ձգտում էր ընդլայնելու իր ազդեցության ոլորտները՝ տեր դառնալու սևծովյան նեղուցներին և Կ. Պոլսին, **նվաճելու Արևմտյան Հայաստանը**, ամրապնդելու իր դիրքերն Իրանում»[9]:

Այս ամենով ուսուցիչը ևս մեկ անգամ սովորողներին բացատրում է պատերազմի պատճառները, մասնակիցների նպատակները: Եվ հիշատակում է **Ուինսթոն Չերչիլի հայտնի խոսքերը «Չկան հավերժական դաշնակիցներ և թշնամիներ, կան շահեր»**:

[9] Հայոց պատմություն: Նոր շրջան 8/ Վ. Բարխուդարյան, Պ. Չոբանյան, Ա. Խառատյան, Է. Կոստանդյան, Ռ. Գասպարյան, Ռ. Սահակյան, Ա. Հակոբյան.- Եր.: «ՄԱՆՄԱՐ», 2018:

Ուսուցիչը առանձին ներկայացնում է Ռուսաստանի և Հայաստանի շահերի համընկնումը, որի համար վերհիշել է տալիս «Հայոց պատմություն» առարկայից անցած գիտելիքները: Ռուսաստանը այդ ժամանակ ծրագրել էր իրականացնել իր դարավոր նպատակը՝ գրավել Բոսֆոր ու Դարդանել նեղուցները և դուրս գալ Միջերկրական ծով, ինչպես նաև գրավել Արևմտյան Հայաստանը և ամուր հաստատվել Մերձավոր Արևելքում: Արդյունքում՝ Օսմանյան կայսրությունը պետք է մասնատվեր: Ինչպես տեսնում ենք, հայ ժողովրդի շահերը համընկնում էին իր ռազմավարական դաշնակցի շահերի հետ, որի պատճառով էլ հայերը պատերազմեցին Կովկասյան ճակատում ռուսական բանակի կազմում: Նշանակալի է նաև ֆրանսիական բանակի կազմում հայերի մասնակցությունը:

Հայ կամավորականները Առաջին համաշխարհային
պատերազմում: Ջոկատի շտաբը. Խեչո, Դրո, Արմեն Գարո:

Հայերի մասնակցությունը պատերազմում զուգորդվեց և՛ մեծագույն ազգային ողբերգությամբ, և՛ փառապանծ հաղթանակներով:

Ներկայացնենք մի ուշագրավ մեջբերում՝ 1901-1909 թթ. ԱՄՆ նախագահ Թեոդոր Ռուզվելտի 1918 թվականի մայիսի 11-ով թվագրված նամակից մի հատված. «Հայոց ջարդը՝ (1-ին համաշխարհային) պատերազմի ամենամեծ ոճիրը հանդիսացավ, և Թուրքիայի դեմ հակազդեցության բացակայությունը՝ հոմանիշն էր այդ քայլի արտոնության… Թուրքական սարսափների դեմ արմատական միջոցներին չդիմելու

փաստը՝ համաշխարհային խաղաղության մասին ապագայի բոլոր ճառերը դարձնում են իմաստազուրկ անմտություն»[10]:

Առաջին աշխարհամարտի ավարտը Հայաստանը դիմավորեց արդեն որպես եվրոպական հաղթնակած պետությունների՝ Անտանտի դաշինքի ճամբարին միացած պետություն: Պատերազմից հետո Անտանտի դաշինքի երկրների Գերագույն խորհուրդը (ներկայիս Եվրամիության նախատիպը) ձեռնամուխ եղավ Հարավային Կովկասի սահմանազատմանը: 1919-ի ապրիլին Մեծ Բրիտանիայի ջանքերով Հայաստանի Հանրապետությունը հաստատեց իր գերիշխանությունը նախ Կարսի մարզի վրա, այնուհետև նաև՝ Նախիջևանի երկրամասի: 1920 թվականի հունվարին Անտանտի դաշինքի երկրների Գերագույն խորհուրդը պաշտոնապես ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը որպես անկախ պետություն և նրա պետական սահմանները Օսմանյան Թուրքիայի հետ՝ ներառելով Երևանի նահանգը, Կարսի մարզը և Նախիջևանի երկրամասը:

Հայոց պատմություն և Համաշխարհային պատմության վերը նշված թեմաների ամփոփման ժամանակ ուսուցիչը նշում է, որ մեր օրերում էլ, ինչպես տեսնում ենք, արցախյան 44-օրյա պատերազմի ժամանակ և հետո ընկած ժամանակահատվածում պատմությունը կրկնվում է: Հայաստանը ռազմավարական առումով կարևոր է տարածաշրջանի համար և միշտ խանգարել է Մեծ Թուրանի ծրագրի իրագործմանը:

Նմանատիպ թեմաների շնորհիվ հնարավորություն է ստեղծվում սովորողների մոտ ձևավորվել բարձր ազգային ինքնագիտակցություն, դաստիարակել հայրենասեր քաղաքացիներ, իսկ միջառարկայական կապերը ուղղակիորեն նպաստում են ազգային վերելքների և վայրէջքների իրական պատճառները էլ ավելի շոշափելի և ընկալելի դարձնելու համար:

[10]Հայ Ժողովրդի Պատմություն, Հ. 6./ Աղայան Ժ. Պ., Բարսեղյան Խ. Հ. և ուրիշներ.: ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստ., Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 128:

1.3 Միջառարկայական կապերի հաստատումը համաշխարհային պատմության և այլ հումանիտար առարկաների միջև

Համաշխարհային պատմությունը միջառարկայական կապերով առնչվում է գրեթե բոլոր հումանիտար առարկաների հետ: Կարևոր է **համաշխարհային պատմություն-հասարակագիտություն** առարկաների միջև միջառարկայական կապերի կիրառումը դասավանդման գործընթացում: Հասարակագիտության դասընթացի ժամանակ սովորողները ծանոթանում են այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են ժողովրդավարություն, ամբողջատիրություն, ֆաշիզմ, սոցիալիզմ և այլն:

Համաշխարհային պատմության 9-րդ դասարանի դասընթացի ընթացքում ևս աշակերտները անցնում են հասարակագիտական այդ հասկացությունները, սակայն՝ պատմական դիտանկյունից: «Ժողովրդավարական հասարակությունները և տնտեսական մեծ ճգնաժամը», «Ամբողջատիրական վարչակարգերը Եվրոպայում»[11] թեմաների դասավանդման ընթացքում ուսուցիչը միջառարկայական կապերի ընձեռած հնարավորությունների միջոցով հարցեր է տալիս և վերհանում՝ ի՞նչ գիտեն սովորողները այդ հասկացությունների մասին:

Ժողովրդավարությունը: «Ժողովրդավարություն» հասկացությունը շատ ընդգրկուն է և բարդ: Գոյություն չունեն համընդհանուր ճանաչում գտած պատկերացումներ դրա մասին: Տարբեր մոտեցումներ շեշտադրում են ժողովրդավարության առանձին կողմերը, օրինակ՝ մեծամասնության իշխանությունը, ընտրությունները, գաղափարների բազմազանությունը, մարդու իրավունքները: Ուստի ժողովրդավարությունը մեկնաբանվում է մի քանի իմաստներով: Դրանցից մեկը հետևյալն է: Ժողովրդավարությունը ժողովրդի իշխանության քաղաքական կազմակերպությունն է, որն օրենքի հիման վրա ապահովում է քաղաքացիների հավասար մասնակցությունը պետական և հասարակական գործերի կառավարմանը, պետության հիմնական մարմինների ընտրովիությունը, մարդու իրավունքների կենսագործումը և պաշտպանությունը:

[11]Համաշխարհային պատմություն: 9-րդ դասարան: 1-ին մաս/ Ն. Հովհաննիսյան, Ա. Ղուկասյան, Հ. Ալեքսանյան. – Եր.: Էդիթ Պրինտ, 2019:

Ժողովրդավարությունն առաջին հերթին պետության ձև է: Հին Հունաստանում ժողովրդավարությունը հասկացվում էր որպես պետության հատուկ ձև, որի դեպքում իշխում էր ոչ թե մեկ անձը (միապետը, բռնապետը) կամ անձանց խումբը (արիստոկրատիան, օլիգարխիան), այլ պետության կառավարմանը մասնակցելու հավասար իրավունք ունեցող բոլոր քաղաքացիները[12]:

Այնուհետև ներկայացվում է ժողովրդավարության սկզբունքները, որով էլ այն տարբերվում է մյուս վարչակարգերից:

- **Ազատություն և իրավահավասարություն**: Ժողովրդավարական հասարակության անդամներն ազատ մարդիկ են: Ուստի ժողովրդավարությունը ենթադրում է մարդու երաշխավորված ազատ գոյություն: Ժողովրդավարական հասարակությունում բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև, ունեն հավասար պաշտպանության իրավունք, կատարած իրավախախտման համար կրում են հավասար պատասխանատվություն: Իրավահավասարությունը ենթադրում է, չեն կարող լինել արտոնություններ և սահմանափակումներ ռասայական, մաշկի գույնի, քաղաքական, կրոնական և այլ համոզմունքների, սեռի, էթնիկական և սոցիալական ծագման, գույքային դրության, բնակության վայրի, լեզվական և այլ հատկանիշներով:
- **Հրապարակայնություն և թափանցիկություն**: Հանրային իշխանության մարմինները պետք է գործեն բաց և թափանցիկ: Բնակչությունը պետք է տեղեկացված լինի ներքին և արտաքին կյանքի դեպքերի մասին, անհրաժեշտության դեպքում ստանա իրեն հետաքրքրող տեղեկությունները: Շատ կարևոր է հետադարձ կապը, այսինքն՝ պետությունը պետք է ոչ միայն գործի թափանցիկ, այլև հաշվի առնի հասարակական կարծիքը, տրամադրությունները:
- **Բազմազանություն և մրցակցություն**: Ժողովրդավարությունն իրական է, երբ նրա հիմքում ընկած է հասարակական երևույթների բազմազանությունը: Դա նախադրյալ է մրցակցության համար: Ժողովրդավարությունն անհնարին է առանց մրցակցության, օրինակ՝ առանց դիմության և ընդդիմության, որոնք բազմակուսակցության հետևանք են: Բազմազանությունը բնորոշ է ժողովրդավարական հասարակության գրեթե բոլոր ոլորտներին:

[12] Հասարակագիտություն: 9-րդ դաս. Դասագիրք/ Գ. Ղազինյան, Ա. Վաղարշյան, - Եր.: Տիգրան Մեծ, 2018:

Ամբողջատիրություն (տոտալիտարիզմ): 20-րդ դարի 20-30-ականներին եվրոպական երկրներում գաղափարախոսության և քաղաքականության մեջ իրենց ծայրահեղությամբ աչքի էին ընկնում ամբողջատիրության, ֆաշիզմի, նացիզմի և ռասիզմի գաղափարախոսությունները, որոնք բարձրացվեցին պաշտոնական պետական քաղաքականության մակարդակի:

«Տոտալիտար» բառն ունի լատինական ծագում և բառացիորեն նշանակում է «ամբողջ», «բոլոր», «լրիվ»: Պետության և իրավունքի բնագավառում այն օգտագործվում է տվյալ վարչակարգի, նրա բնույթի և տեսակի առումով: Տոտալիտար պետությունը ավտորիտար՝ ինքնակալ, դիկտատորական պետության տարատեսակներից մեկն է: Ամբողջատիրության ամենաբնորոշ գծերն են՝ պետական մենքենայի ամբողջական՝ տոտալ վերահսկողություն հասարակության քաղաքական, տնտեսական, գաղափարական և մշակութային, անգամ անհատի անձնական կյանքի վրա, ժողովրդավարության և ազատությունների խիստ սահմանափակում, այլախոհության հետապնդում, իշխանությունների անսահմանափակ և անվերահսկելի լիազորություններ: Ամբողջատիրական պետություններում թեև կան սահմանադրություններ, բայց դրանք ձևական բնույթ են կրում, իրավունքի փոխարեն գործում է կամայականությունը: Չկա կարծիքների ազատություն և բազմազանություն, բոլորը պաշտում են միևնույն կուռքը, որպիսին հանդիսանում է տվյալ երկրի կամ ազգի առաջնորդը, որի խոսքը, կարծիքը և տեսակետը բարձր են ամեն ինչից:

Ամբողջատիրական վարչակարգեր հաստատվեցին Եվրոպայի, Ասիայի, Լատինական Ամերիկայի և Աֆրիկայի մի շարք երկրներում: Տիպաբանորեն նրանք բաժանվում են սոցիալիստական, ֆաշիստական, նացիստական և զիվորական-դիկտատորական կամ խունտայական ամբողջատիրության:

Ամբողջատիրական պետություններ էին քեմալական Թուրքիան, Իրանը Փահլավիների դինաստիայի կառավարման շրջանում, Սաուդյան Արաբիան և այլ երկրներ:

Համաշխարհային պատմություն-հասարակագիտություն առարկաների միջև միջառարկայական կապերի հաստատումից հետո ուսուցիչը դասարանը բաժանում է երկու մասի և ամեն մեկին հանձնարարում է գրել ժողովրդավարություն և

ամբողջատիրություն հասկացությունների հետ կապված հատկանիշները, պատմական իրադարձությունները:

Աղյուսակ 1. Լրացրե՛ք «Ժողովրդավարություն» և «Ամբողջատիրություն» աղյուսակները

Բնորոշ վարչաձևերը	Առաջնորդները	Երկրները	Պատմական իրադարձությունները

Համաշխարհային պատմություն - հայոց եկեղեցու պատմություն միջառարկայական կապերի հաստատումը կարելի է իրականացնել հատկապես կրոնական թեմաների դասավանդման ժամանակ:

Համաշխարհային պատմության 7-րդ դասարանի դասագրքի «Քրիստոնեական եկեղեցին» թեման ներկայացված է հետևյալ պատմական իրադարձություններով[13]:

Հիմնադրվելով առաջին դարում՝ քրիստոնեությունը աստիճանաբար տարածում գտավ Հռոմեական հսկայածավալ տերության մեջ և Արևելքի որոշ երկրներում: Քրիստոնեությունը աշխարհում առաջինը Հայաստանում ճանաչվեց պետական կրոն (301 թ.):

Միլանի 313 թ. հրովարտակով այն ճանաչվեց Հռոմեական կայսրության մյուս կրոններին հավասար, իսկ Կոստանդնուպոլսի 381 թ. տիեզերական ժողովում քրիստոնեությունը հռչակվեց կայսրության միակ պաշտոնական կրոն:

Կայսրության տարածքում ստեղծվեց քրիստոնեական եկեղեցու ուժեղ կառույց: Եկեղեցու տարածքային (թեմական) բաժանման ստորին միավորը գյուղն էր, ապա՝ գավառը: Կային նաև ավելի խոշոր միավորներ՝ մետրոպոլիտություններ, արքեպիսկոպոսություններ, պատրիարքություններ:

Համաշխարհային պատմության 7-րդ դասարանում «Քրիստոնեական եկեղեցին» թեմայի դասավանդման ժամանակ ուսուցիչը թեման էլ ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով ավելի մանրամասն կարող է ներկայացնել քրիստոնեության ընդունման և

[13] Համաշխարհային պատմություն: Միջին դարեր: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 7-րդ դասարանի համար/ Գ. Հարությունյան, Ա. Նազարյան. – Եր.: «Զանգակ» հրատ., 2019:

տարածման մասին հայկական ավանդությունները, պահպանված եկեղեցական պատմությունները և սրբերի մասին վկայությունները:

Հայոց եկեղեցու պատմության 7-րդ դասարանի դասագրքում հանգամանորեն ներկայացված է քրիստոնեության պետական կրոն հռչակման նախադրյալները, պատմական իրադարձությունները, քրիստոնեական վարքաբանությունները[14]:

1. Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու նախադրյալները: 226 թ. Պարսկաստանում տեղի են ունենում քաղաքական մեծ փոփոխություններ: Պարթև Արշակունիները գահընկեց են արվում, և գահ են բարձրանում Սասանյան հարստության ներկայացուցիչները: Սասանյանները վաղուց զբաղեցնում էին Պարսկաստանի քրմապետի պաշտոնը և տիրելով գահին՝ նրանք պետական կրոն են հռչակում զրադաշտականությունը:

Այդ իրադարձությունները չէին կարող չանդրադառնալ հայ-պարսկական հարաբերությունների վրա: Պարսկաստանի նախկին դաշնակից Հայաստանն այժմ դառնում է նրա գլխավոր հակառակորդներից մեկը, քանի որ Հայաստանում իշխում էր Արշակունիների հայկական ճյուղը:

Իրադրությունն էլ ավելի է բարդանում որոշ հայ նախարարների պառակտիչ գործունեության պատճառով: Երկիրը ծանր վիճակից դուրս բերելու համար անհրաժեշտ էր համախմբել հայ ժողովրդի բոլոր խավերին, նախևառաջ՝ ազնվականությանը:

Հեթանոսությունը, դարեր շարունակ իր վրա կրելով հունա-հռոմեական և պարսկական կրոնների ազդեցությունը, չէր կարող գաղափարական հիմք հանդիսանալ այդ խնդիրը լուծելու համար:

Հայ Արշակունիներն իրենց հայացքն ուղղում են դեպի քրիստոնեությունը, որը III դարի վերջին Հայաստանում արդեն ուներ մեծաքանակ հետևորդներ: Քրիստոնյաները բոլորին զարմացնում էին իրենց անսասան հավատքով, նրանք նույնիսկ պատրաստ էին հրաժարվել կյանքից, բայց ոչ հավատքից:

[14] Հայոց եկեղեցու պատմություն: Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք/ Վ. Ղանդիլյան և ուրիշներ. – Եր., « Տիգրան Մեծ», 2018:

Հռոմեական զորքերի օժանդակությամբ Հայաստանն ազատագրած և 298 թ. վերստին գահ բարձրացած Ս. Տրդատ Մեծը (287-330), ճիշտ գնահատելով ստեղծված իրավիճակը, 301 թ. քրիստոնեությունը Հայաստանում հռչակեց պետական կրոն:

2. Ավանդությունների ներկայացում (Ս. Գրիգոր Լուսավորիչ: Ս. Հռիփսիմյան կույսերի նահատակությունը): Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու վերաբերյալ պատմիչ Ագաթանգեղոսի երկում պահպանվել է պատմական հիմք ունեցող մի ավանդապատում:

Տրդատ Մեծ թագավորը, Աշխեն թագուհին և թագավորի քույր Խոսրովիդուխտը

Ըստ այդ ավանդության՝ պարսից Արտաշիր արքան հայոց Խոսրով թագավորի դեմ դավադրություն կազմակերպելու նպատակով Հայաստան է ուղարկում պարթև Անակ իշխանին: Որսի ժամանակ Անակին հաջողվում է մահացու վիրավորել Խոսրով թագավորին: Սակայն դավադրությունը բացահայտվում է, և հայ իշխանները սրի են քաշում Անակի ողջ ընտանիքը: Փրկվում է միայն նրա մանկահասակ որդին՝ Սուրենը, ում դայակը կարողանում է փախցնել Բյուզանդիայի Կեսարիա քաղաք, որտեղ նա մանկանը հանձնում է քրիստոնյա դաստիարակների խնամքին, ովքեր նրան մկրտում և վերանվանում են Գրիգոր:

Խոսրով II Արշակունու մահից հետո պարսից թագավորը հարձակվում է Հայաստանի վրա և գրավում այն: Թագաժառանգ Ս. Տրդատին փախցնում են Հռոմ: Ս. Տրդատը մեծանում ու դաստիարակվում է հռոմեական արքունիքում: Այնտեղ նա փայլուն զինվորական կրթություն է ստանում և ձեռնամուխ լինում Հայաստանի ազատագրմանը:

287 թ. Ս. Տրդատը հռոմեական բանակների ուղեկցությամբ վերադառնում է հայրենիք: Ճանապարհին՝ Կեսարիայում, նա ծանոթանում է Ս. Գրիգորի հետ և հիանալով նրա իմաստությամբ՝ նրան նշանակում է արքունի քարտուղար: Ս. Տրդատին միանում են բազմաթիվ հայկական զինված ջոկատներ: Հայ-հռոմեական միացյալ ուժերը մի շարք հաղթանակներ են տանում պարսիկների դեմ: Ի նշան տարած հաղթանակների՝ Ս. Տրդատը Եկեղյաց գավառում մեծ հանդիսություններ է կազմակերպում: Ամբողջ զորքն ու

արքային ուղեկցող շքախումբը ծաղկեպսակներ և զոհեր են մատուցում Անահիտ դիցուհուն: Միայն քրիստոնյա Ս. Գրիգորը հրաժարվում է հեթանոս աստվածուհուն զոհեր մատուցելուց: Արքային վշտացնում է իր սիրելի քարտուղարի արարքը: Նա տարբեր միջոցներով փորձում է դարձի բերել Ս. Գրիգորին: Բայց վերջինս մնում է անդրդվելի: Արքան հրամայում է ծանր տանջանքների ենթարկել նրան: Շուտով Ս. Տրդատին հայտնի է դառնում, որ Ս. Գրիգորը դավադիր Անակ Պարթևի որդին է: Զայրացած արքան հրամայում է նրան նետել մահապարտների համար Արտաշատում կառուցված Խոր Վիրապ բանտը: Ըստ Ագաթանգեղոսի պատմության՝ Ս. Գրիգորը Խոր Վիրապում մնում է տասներեք տարի:



Ս. Գրիգոր Լուսավորչի ելքը Խոր Վիրապից

Նույն ավանդությունը պատմում է, որ այդ տարիներին մի քանի տասնյակ քրիստոնյա կույսեր, Հռոմի կայսեր հալածանքներից փախչելով, գալիս են Հայաստան: Նրանք բնակություն են հաստատում Վաղարշապատ մայրաքաղաքի մոտ գտնվող հնձաններում: Կույսերից մեկը՝ Ս. Հռիփսիմեն, աննկարագրելի գեղեցկություն ուներ: Ս. Տրդատ թագավորը, գերվելով Ս. Հռիփսիմեի գեղեցկությամբ, ցանկանում է ամուսնանալ նրա հետ: Սակայն Ս. Հռիփսիմեն մերժում է արքայի առաջարկը: Զանազան խոստումներով և ընծաներով Ս. Տրդատը փորձում է հրապուրել նրան, բայց երբ Ս. Հռիփսիմեն մնում է անդրդվելի, հրամայում է սպանել նրան և մյուս կույսերին:

Ագաթանգեղոսի վկայությամբ՝ Ս. Հռիփսիմյան կույսերի նահատակությունից հետո Ս. Տրդատը ծանր հիվանդանում է: Բազմաթիվ միջոցներ են գործադրվում, բայց արքան չի ապաքինվում: Թագավորի քույր Ս. Խոսրովիդուխտը երազ է տեսնում, որ արքային կարող է բուժել միայն Խոր Վիրապում բանտարկված Ս. Գրիգորը: Արքայադստեր երազը թերահավատությամբ է ընդունվում արքունիքում: Ոչ ոք չէր հավատում, թե Ս. Գրիգորը կարող էր ողջ լինել: Ս. Խոսրովիդուխտի պնդմամբ իշխանները մեկնում են Խոր Վիրապ: Բոլորը զարմանում են՝ տեսնելով, որ Ս. Գրիգորը ողջ էր: Ազատվելով բանտարկությունից՝ նա մեծ հանդիսավորությամբ մուտք է գործում մայրաքաղաք:

Արքան զղջում է իր կատարած դաժանությունների համար, և Ս. Գրիգորը բուժում է նրան: Ս. Տրդատը դադարեցնում է քրիստոնյաների հալածանքները:

Հրաժարվելով հեթանոսությունից՝ Ս. Տրդատ III Մեծը 301 թվականին քրիստոնեությունը հռչակում է պետական կրոն: Այսպիսով՝ Հայաստանը դառնում է աշխարհում առաջին քրիստոնյա պետությունը:

Ս. Գրիգոր Լուսավորիչը և Ս. Տրդատ Մեծը Վաղարշապատում Ս. Հռիփսիմյան կույսերի նահատակության վայրում, կառուցում են վկայարաններ և այնտեղ ամփոփում նրանց նշխարները: Այդ վկայարանների վրա VII դարում կառուցվեցին եկեղեցիներ: Կառուցված երեք եկեղեցիներից մեկը կոչվեց Ս. Հռիփսիմե, մյուսը՝ Ս. Գայանե, իսկ երրորդը՝ Ս. Շողակաթ անունով:

Համաշխարհային պատմություն-գրականություն միջառարկայական կապը կարելի է



ստեղծել Համաշխարհային պատմության 9-րդ դասարանի դասագրքի «Համաշխարհային մշակույթը XX դարի երկրորդ կեսին և XXI դարի սկզբին» թեմայի դասավանդման ընթացքում: Թեմայի «Գրականությունը» բաժնում նշվում է. «Նշված ժամանակաշրջանում բուռն զարգացում ապրեց գրականությունը, որն իր ոլորտում ներառեց ոչ միայն ավանդաբար մեծ և զարգացած գրականություն ունեցող երկրները, այլև Ասիայի, Աֆրիկայի և Հարավային Ամերիկայի երկրները: Իր տաղանդով փայլեց ամերիկյան քառյակը՝ Ֆոլկները, Հեմինգուեյը, Սարոյանը և Ստեյնբեկը»[15]:

Ուսուցիչը կանգ է առնում Սարոյան ազգանվան վրա և մեծանուն գրողի վերաբերյալ մեջ է բերում մի քանի փաստեր, որոնց սովորողները ծանոթ են դեռևս 7-րդ դասարանի գրականության դասընթացից:

Վիլյամ Սարոյանը հայ է և ամբողջ կյանքում հավատարիմ է մնացել իր հայկական արմատներին: Նրա շատ հերոսներ հայեր են, իսկ գործերի մեծ մասը նվիրված է հայության կյանքին: Նա այնքան կապված էր Հայաստանին, որ կտակեց իր աճյունի մի

[15]Համաշխարհային պատմություն: 9-րդ դասարան: Մաս 2/ Ն. Հովհաննիսյան, Ա. Ղուկասյան, Հ. Ալեքսանյան. – Եր.: Էդիթ Պրինտ, 2019:

մասը թաղել հայրենիքում: Սարոյանի աճյունը հողին է հանձնվել Կոմիտասի պանթեոնում, որտեղ հանգչում են մեր գրականության ու մշակույթի մեծությունները[16]:

Սարոյանի գրչին են պատկանում վիպակների մեկ տասնյակից ավելի ժողովածուներ՝ «Փոքրիկ Երեխաներ», «Ողջույն քեզ, սե՛ր», «Իմ անունը Արամ է»: Սարոյանը գրել է նաև վիպակներ, վեպեր և թարգմանություններ: Վիպակներից հիշարժան է «Մարդկային կատակերգությունը», վեպերից՝ «Վեսլի Ջեկսոնի արկածները», «Հե՜յ, ով կա այդտեղ», «Խաղողի այգին»: Նրա ստեղծագործության մեջ շատ հիմնավոր տեղ ունի ինքնակենսագրական պատումը, որով նա ստեղծեց վիպակների շարք՝ «Ինչ-որ ծիծաղելի բան», «Հայրիկ, դու խենթ ես», «Մայրիկ, ես սիրում եմ քեզ», «Տղաներ և աղջիկներ»:

Այսպիսով, համաշխարհային պատմության և այլ հումանիտար առարկաների միջև միջառարկայական կապերի հաստատումը գործնականում հնարավոր է դարձնում դասավանդվող թեման դարձնել բազմակողմանիորեն հետաքրքիր: Հասկացությունները, որոնք աշակերտը անցել է հասարակագիտության դասերին, պատմական փաստերով հիմնավոր կերպով ներկայացվում է համաշխարհային պատմության դասաժամին: Մի շարք պատմական իրադարձություններ և նշանավոր մարդկանց վերաբերյալ փաստեր միաժամանակ ներկայացված կարող է լինել համաշխարհային պատմության և այլ հումանիտար առարկաների դասագրքերում: Ուսուցչի խնդիրն է դասավանդման ընթացքում միջառարկայական կապերի հաստատման միջոցով նյութը դարձնել ուսանելի և հիշվող:

[16] Գրականություն: 7-րդ դասարանի դասագիրք: Երկրորդ լրացված հրատարակություն/ Դ.Վ. Գասպարյան. – Եր.: Տիգրան Մեծ, 2016:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Միջառարկայական կապերը մանկավարժական հասկացություն է, որը կապ է հաստատում իրականության օբյեկտների, երևույթների և գործընթացների միջև՝ համադրելով ներառական կապերը, որոնք իրենց արտացոլումն են գտել ուսումնադաստիարակչական գործընթացի բովանդակության, ձևերի և մեթոդների մեջ, իրականացնում են կրթող, դաստիարակող և զարգացնող գործառույթներ:

Միջառարկայական կապերը՝ մեթոդաբանական առումով հոգեբանորեն հիմնավորված դիդակտիկական գիտելիքների ինքնուրույն ոլորտ է, դիդակտիկական սկզբունքների, մեթոդների, միջոցների այնպիսի կառուցվածք, որի միջոցով ձևավորվում է գիտելիքների որակապես նոր մակարդակ միջառարկայական գիտելիքներ: Այն հնարավորություն է տալիս սովորողներին տիրապետելու մտածողության համընդհանուր մեթոդներին, դիտարկելու, մոդելավորելու, վարկածներ առաջադրելու, դրանք փորձնական ճանապարհով ստուգելու, ստացված արդյունքները ընդհանրացնելու և եզրահանգելու, հիմնավորված փաստարկներ բերելու և բնության այս կամ այն երևույթի մասին տրամաբանված դատողություններ անելու:

Միջառարկայական կապերի հաստատումը համաշխարհային պատմության դասավանդման ընթացքում կատարում է մի շարք գործառույթներ՝ գիտելիքների ընդհանրացում և համակարգում, առարկաների ուսումնական պլանների համաձայնեցում, սովորողների մոտ աշխարհի ամբողջական գիտական պատկերի ձևավորում, մտածողության համընդհանուր մեթոդների ձևավորում:

Համաշխարհային պատմության դասերին միջառարկայական կապերի իրականացումը կարող է կատարվել տարբեր եղանակներով: Ուսումնասիրվող նյութի շուրջ անցկացվող նախապատրաստական զրույցի ընթացքում ուսուցիչը կարող է օգտագործել համաշխարհային պատմության և այլ առարկաների տվյալները՝ նյութի վերաբերյալ ավելի պարզ պատկերացում տալու համար, որպեսզի դրանով իսկ հող ստեղծվի բուն նյութի յուրացման համար: Նյութի մշակման ժամանակ, երբ աշակերտների ընթերցած այս կամ այն հատվածի շուրջ որոշակի բացատրություններ են տրվում ուսուցչի և աշակերտների կողմից, կարելի է համանման փաստեր բերել նաև արդեն անցած նյութերից, համեմատություններ, հակադրություններ ու զուգահեռներ անցկացնել՝ միտքն ավելի պարզ, գաղափարներն ու հասկացություններն ավելի մատչելի դարձնելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գրականություն: 7-րդ դասարանի դասագիրք: Երկրորդ լրացված հրատարակություն/ Դ.Վ. Գասպարյան. – Եր.: Տիգրան Մեծ, 2016:
2. Համաշխարհային պատմություն: 8-րդ դասարան / Ն. Հովհաննիսյան, Ա. Ղուկասյան, Ա. Ղուկասյան, Ա. Նարիմանյան – Եր.: ԷԴԻԹ ՊՐԻՆՏ, 2013:
3. Համաշխարհային պատմություն: 9-րդ դասարան: 1-ին մաս / Ն. Հովհաննիսյան, Ա. Ղուկասյան, Հ. Ալեքսանյան. – Եր.: Էդիթ Պրինտ, 2019:
4. Համաշխարհային պատմություն: 9-րդ դասարան: Մաս 2/ Ն. Հովհաննիսյան, Ա. Ղուկասյան, Հ. Ալեքսանյան. – Եր.: Էդիթ Պրինտ, 2019:
5. Հայոց եկեղեցու պատմություն: Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք/ Վ. Ղանդիլյան և ուրիշներ. – Եր., « Տիգրան Մեծ», 2018:
6. Հայոց պատմություն: Նոր շրջան 8/ Վ. Բարխուդարյան, Պ. Չոբանյան, Ա. Խառատյան, Է. Կոստանդյան, Ռ. Գասպարյան, Ռ. Սահակյան, Ա. Հակոբյան.- Եր.: «ՄԱՆՄԱՐ», 2018:
7. Հայ Ժողովրդի Պատմություն, Հ. 6./ Աղայան Ժ. Պ., Բարսեղյան Խ. Հ. և ուրիշներ.: ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստ., Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981:
8. Հասարակագիտություն: 9-րդ դաս. Դասագիրք/ Գ. Ղազինյան, Ա. Վաղարշյան, - Եր.: Տիգրան Մեծ, 2018.
9. Համաշխարհային պատմություն: Միջին դարեր: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 7-րդ դասարանի համար/ Գ. Հարությունյան, Ա. Նազարյան. – Եր.: «Զանգակ» հրատ., 2019:
10. Абдуллаева Г.Д., Атажанов И.И. Межпредметные связи в современной школе// Актуальные проблемы гуманитарных и естественных наук.- 2016.-N3-3. – с. 66-68.
11. Гурьев А. И. Межпредметные связи в системе современного образования: Монограеия,- Барнаул: Изд-во Алт. Ун-та, 2002.
12. Гурьев А. И., Статус межпредметных связей в системе современного образования / А. И. Гурьев // «Наука и школа», 2002, N 2.
13. Коменский Я. Великая дидактика. Санкт-Петербург. 2016.
14. Максимова В.Н., Межпредметные связи и совершенствование процесса обучения. М.: «Просвещение», 1984.